

Բանալի բառեր՝ դեմոկրատիա, լիբերալիզմ, իրավակարգ, լիբերալ դեմոկրատիա, տնտեսական աճ, ինստիտուտ:

ՀՏԴ 330.35

ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԾԸ. ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՈՐՈՇ ԶԻՄՆԱԶԱՐՑԵՐ

Լուսյա ԳԱԼՈՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու,
ՀՊՏՀ ԳՄ «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի
սախտենա

Դեմոկրատիայի մակարդակի¹ բարձրացումը տնտեսական զարգացման հիմնաքարերից է: Կան տարբեր մոտեցումներ դեմոկրատիայի և հասարակական զարգացման մյուս նպատակների փոխկապակցվածության վերաբերյալ: Ըստ հայտնի փոխառված Ջոն Բոլտի՝ դեմոկրատական արժեքները և մարդու իրավունքներն ունեն առաջնային կարևորություն, իսկ «ասիական արժեքների» կողմնակիցները պնդում են, որ հասարակության շահերն են առաջնային անհատի շահերի նկատմամբ՝ նկատի ունենալով, որ սկզբունքորեն առանձին անհատների քաղաքական իրավունքները կարելի է զոհել հանուն բարձրագույն հասարակական բարիքի, օրինակ՝ հանուն աճի բարձր տեմպերի և սոցիալական հավասարության հաստատման: Այնուամենայնիվ, նույնիսկ «ասիական արժեքների» կողմնակիցները չեն կասկածում, որ որպես զարգացման նպատակ դեմոկրատիան ունի իր «զիջում»: Վիճաբանությունները վերաբերում են ավելի շատ դեմոկրատական արժեքների՝ զարգացման մյուս նպատակների համեմատ ունեցած հարաբերական զնն, որն, իհարկե, փոփոխվել է մարդկության պատմության ընթացքում:

Վերոնշյալ հարցերի հետազոտման համար անհրաժեշտ է նախ սահմանել դեմոկրատիան: Ըստ ժամանակակից քաղաքագիտության հիմնադիրներից մեկի՝ Ռոբերտ Դալի, դեմոկրատիան քաղաքական ռեժիմ է, որն ունի երկու բնութագրիչներ. 1. անձինք, ովքեր հասարակության համար առավել կարևոր որոշումներ են կայացնում, նշանակվում և փոխվում են ավարկության ճանապարհով, ընդ որում՝ ձայնի իրավունք ունեն քաղաքական ճշգրիտ մեծամասնությունը (այսինքն՝ իշխանության արդյունքը ժողովուրդն է), 2. գոյություն ունեն քաղաքական մրցակցության ինստիտուտներ, շնորհիվ որի՝ քաղաքացիների յուրաքանչյուր խումբ սկզբունքորեն կարող է հրապարակել և պնդել իր տեսակետը: Իհարկե, այս ձևակերպումը պահանջում է զգալի ճշտումներ, որոնց քննարկումը չի մտնում դիտարկվող խնդրի մեջ:

Քաղաքագիտության մեջ ուժեղ ինստիտուտներով դեմոկրատական ռեժիմը (որտեղ ընտրովի մարմինները երաշխավորում են քաղաքացիական ազատությունը, այդ թվում՝ նաև պետական կամայականություններից ազատությունը) կոչվում է լիբերալ դեմոկրատիա: Լիբերալիզմը ենթադրում է անհատների և տնտեսվարող սուբյեկտների այնպիսի իրավունքների երաշխավորություն, ինչպիսին են սեփականության, պայմանագրերի կատարման, վարկառուների և վարկատուների, մարդու կյանքի և արժանապատվության պաշտպանության և արդար դատավարության իրավունքը: Այս իրավունքներն իհարկե կարող են պաշտպանվել միայն ուժեղ պետական ինստիտուտների կողմից: Դեմոկրատիան այս իրավունքներին ավելացնում է ևս մի բանիսը. խոսքի ազատության, ընտրելու և ընտրվելու իրավունքը և այլն:

Այս մոտեցումը համապատասխան՝ Եվրոպան սկզբում դարձավ լիբերալ և հետո միայն դեմոկրատական: Նույն ճանապարհով՝ լիբերալիզմից դեմոկրատիայի անցան (իսկ որոշները դեռ անցնում են)՝ նաև Արևելյան Ասիայի երկրները, որոնք անցած տասնամյակում հասել են զգալի տնտեսական հաջողությունների:

Մեկ այլ ճանապարհով՝ սկզբում դեմոկրատիա, հետո լիբերալիզմ, անցել են Լատինական Ամերիկայի երկրները: Սակայն, տնտեսության համար դեմոկրատիան առանց լիբերալիզմի, այսինքն՝ առանց արդյունավետ գործող ինստիտուտների, որոնք երաշխավորում են տնտեսվարող սուբյեկտների իրավունքները, դարձավ ոչ այնքան բարենպաստ միջավայր. Աֆրիկան և Լատինական Ամերիկան հետպատերազմյան շրջանում գիշեցին իրենց դիոթերը համաշխարհային շուկայում հետ մնալով մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի տեմպով: Հենց այդ ժամանակ էլ տեղի ունեցավ այսպես կոչված ոչ լիբերալ դեմոկրատիայի ստեղծումը (հիմնականում Լատինական Ամերիկայում և Աֆրիկայում): Վերջինս հիմնականում դեմոկրատական ռեժիմ է, բայց չունի լիբերալ իրավունքների պաշտպանության համար արդյունավետ գործող ինստիտուտներ:

1990-ական թվականներին ոչ լիբերալ դեմոկրատիա ունեցող երկրների շարքին ավելացան շատ սովետական և հարավարևելյան Եվրոպայի երկրներ տնտեսական զարգացման առումով գրեթե նույն հետևանքներով:

Մի շարք հետազոտողներ վերջին ժամանակներում արտահայտեցին իրենց մտահոգությունը «երրորդ ալիքի» դեմոկրատիայի զարգացման սոցիալ-քաղաքական և տնտեսական հետևանքների մասին: Ըստ Թ. Կարոթերսի², ավտորիտարիզմից հեռացած և դեմոկրատացված երկրների շարքին դասվող շուրջ 100 երկրներից միայն 18-ն են (Արևելյան Եվրոպայի և Լատինական Ամերիկայի որոշ երկրներ) իրականում գտնվում հաջողակ և լավ գործող դեմոկրատիայի կայացման ճանապարհին կամ ծայրահեղ դեպքում դեմոկրատացման գործում հասել են առաջընթացի և պահպանում են այդ գործընթացում դրական դիսամբիլա:

¹ Այստեղ նկատի ունենք դեմոկրատացման մակարդակը, այսինքն՝ դեմոկրատիայի մակարդակի հավելանը, որը չափվում է Freedom House-ի կողմից իրապարակվող քաղաքական իրավունքի ինդեքսով:

² Carothers, Thomas (2002). The End of the Transition Paradigm. – Journal of Democracy, Jan. 2002, pp.5-21

Այսպիսով, դեմոկրատիայի՝ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության հետ կապված ընդհանրական կարծիք գոյություն չունի: Օրինակ, 1987թ. հետո կատարված հետազոտություններում³, որոնք վերաբերվում են տնտեսական աճի՝ դեմոկրատիայից ունեցած կախվածությանը արձանագրվում է դրական կախվածության փաստ, այն դեպքում, երբ առավել վաղ շրջանում կատարված հետազոտությունները, նույնիսկ էթե դրանք չեն տարբերվել երկրների ընդգրկումով և ժամանակային հատվածներով, հաստատում են, որ ավտորիտար ռեժիմներով երկրները զարգացել են ավելի արագ:

Անցումային երկրներում դեմոկրատիայի՝ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության գնահատմանը նվիրված որոշ հետազոտություններ փաստում են, որ դեմոկրատացումը խթանում է լիբերալացումը, իսկ վերջինս բերում է աճի⁴: Սակայն կան նաև աշխատանքներ⁵, որոնք բացահայտում են տնտեսական աճի վրա միայն իրավակարգի՝ դրական ազդեցությունը, իսկ իրավակարգի վրա վերահսկողության դեպքում դեմոկրատացման և նույնիսկ տնտեսական ազատականացման ազդեցությունը դառնում է բացասական: Չինաստանի և Կիեւնամի օրինակը, որտեղ ընդհանրապես չեն եղել տրանսֆորմացիոն անկումներ, և որոնք հետկոմունիստական բոլոր երկրների մեջ հասել են ամենաբարձր աճին, իհարկե բավական ներկայանալի է:

Տարբերում ենք նաև երիտասարդ և ծեր դեմոկրատիաները. պայմանագրային և սեփականության իրավունքի ապահովվածությունը մեծապես կախված է դեմոկրատիայի տարիքից⁶: Քաղաքական ցիկլերը (տնտեսությունը աշխուժացնելու համար պետական ծախսերի աճը և ընտրությունների նախօրեին դրամական էքսպանսիաները) առավել արտահայտված և դրա համար էլ առավել կործանարար են դառնում երիտասարդ դեմոկրատիայի ժամանակ⁷:

Աճի տեսության հայտնի մասնագետներից Ռ. Բերոուն⁸ պնդում է, որ դեմոկրատիայի՝ տնտեսական աճի վրա ունեցած գումարային էֆեկտը կարելի է բնութագրել որպես «թույլ բացասական»: Աճի համար առավել բարենպաստ է դեմոկրատիայի միջին մակարդակը, հետո ցածր, իսկ ապա՝ բարձր մակարդակը: Մեկ այլ աշխատանքում նա գրում է. «Այն միտքը, որ ընտրելու իրավունքի իմաստով դեմոկրատիան անհրաժեշտ է տնտեսական աճի համար, նույնպես ճիշտ չէ, ինչպես այն պնդումը, որ աղքատ երկրներին անմիջապես պետք է դիկտատուրա, որպեսզի դուրս գան աղքատությունից: Թույլ դեմոկրատիա և թերի իրավակարգ ունեցող թույլ ինստիտուտներով երկրների համար դեմոկրատիայի զարգացումը ավելի պակաս կարևոր է, քան աճի և ներդրումների խթանման համար իրավակարգի ամրապնդումը: Այնպես որ պետք չէ պնդել, որ դեմոկրատիան հանդիսանում է աճի անհրաժեշտ պայման, քանի որ այն անհրաժեշտ է իրավակարգի համար»⁹: Այս մոտեցմանը համապատասխան՝ ցինական «տնտեսական հրաշքը» հետազոտողները 1980-90-ականների արագ աճը բացատրում են հենց պետական ինստիտուտների արդյունավետությամբ և ոչ թե դեմոկրատիայով¹⁰:

Ներկայացնելով գոյություն ունեցող տեսությունները՝ հորվածում քննարկվել են երկու փոխադարձորեն կապված վարկածներ. ուժեղ իրավակարգով երկրներում դեմոկրատացումը խթանում է տնտեսական աճը, իսկ թույլ իրավակարգով երկրներում դեմոկրատացումը բացասական է ազդում տնտեսական աճի վրա, թույլ իրավակարգի պայմաններում դեմոկրատացումը բերում է այսպես կոչված ոչ լիբերալ դեմոկրատիայի առաջացման, այդպիսի երկրներում ստվերային տնտեսությունը ընդլայնվում է, պետության ինստիտուցիոնալ ներուժը թուլանում է, մակրոտնտեսական քաղաքականության որակը վատանում է:

Այս համատեքստում օգտագործվում է դեմոկրատիայի նեղ սահմանումը, համաձայն որի՝ նրա հիմնական հատկանիշներն են՝ գլխավոր պաշտոնատար անձանց ընտրությունը և քաղաքական մրցակցության հնարավորությունը: Այսպիսի սահմանման մեջ «դեմոկրատիա» հասկացությունը ներառում է այնպիսի իրավունքներ, ինչպիսին են ընտրելու և ընտրվելու իրավունքը, քաղաքական կուսակցությունների ձևավորման, հավաքների իրավունքը: Մնացած իրավունքները, ինչպիսիք են խոսքի և կարծիքի ազատությունը, էթնիկական, ռասայական, կրոնական և այլ հատկանիշներով խտրականությունից պաշտպանվելու իրավունքը, կարող են սկզբունքորեն ապահովվել նաև ավտորիտար ռեժիմների ժամանակ: Դեմոկրատիան սովորաբար հակադրվում է ավտորիտար ռեժիմների հետ, որտեղ որոշումների ընդունման իրավունքը պատկանում է ավտոկրատներին կամ բարձրագույն պաշտոնատար անձանց նեղ խմբի: Շատ դեպքերում ավտոկրատները ռեսուրսները օգտագործում և բաշխում են այնպես, որ տնտեսական աճը խթանելը դժվար է նույնիսկ ավտոկրատի ցանկության դեպքում: Չնայած կան «զուտ» ավտոկրատիային վերաբերող բազմաթիվ հավասարակշռված օրինակներ, (Յուկոնգ, Թայվան, Սինգապուր, տարբեր ժամանակահատվածներում Գարավային Կորեա), որոնք անցյալը են խելամիտ տնտեսական քաղաքականություն և տնտեսական ու սոցիալական զարգացման գործում հասել են զգալի հաջողությունների:

Ընդունված է, որ հարստության որոշակի մակարդակը, քաղաքացիական հասարակության կրթությունը և զարգացումը հանդիսանում են արդյունավետ դեմոկրատիայի անհրաժեշտ նախադրյալներ: Դա նշանակում է, որ դեմոկրատիան կարող է դիտարկվել որպես «պերճանքի առարկա», որի նկատմամբ պահանջարկը առաջանում է միայն այն ժամանակ, երբ հայտնվում է կայուն գնորդ: Արագ դեմոկրատացումը, ինչպես և բոլոր նոր քաղաքական կարգերը, ստեղծում են ռեսուրսային ստացման համար բազում հնարավորություններ. այդ վերաբաշխողական ակտիվությունը կարող է փչացնել ինստիտուտները և դեմոկրատիան վերածել բառային վիճակի, էթե միայն կարգերը չեն հիմնվում օրենքի վրա:

Այսպիսով, թույլ դեմոկրատիայի /ոչ լիբերալ/ պայմաններում առաջանում են նաև թույլ կառավարություններ, որոնք ենթարկվելով տարաբնույթ ճնշումների ու ազդեցությունների, չեն կարող կյանքի կոչել օրենքները, մասնավորապես՝ կրճատել ստվերային տնտեսության աճը և հավաքեն հարկերի բավարար բանակություն հասարակական բարիքների ֆինանսավորման համար, արդյունքում նրանք ստիպված են ավելի հաճախ ձգտել ինֆլյացիոն ֆինանսավորմանը և փոխառություններին: Գիմնահիմնի խորանում է այսպես կոչված ռեսուրսային չարիքով. հարուստ բնական ռեսուրսներով երկրներում վատ ինստիտուտների պայմաններում ռեսուրսային ռեսուրսային բաշխումը կարող է ավելացնել եկամուտների բաշխման

³ Przeworski, Adam and Limongi, Fernando (1993). Political Regimes and Economic Growth. – Journal of Economic Perspectives, Vol. 7, No. 3, Summer 1993, pp. 51-69

⁴ Fidrmuc, Jan (2002). Economic Reform, Democracy and Growth during Post-communist Transition. CEPR Discussion Paper No. 2759, 2002

⁵ Popov, Vladimir (2000). Shock Therapy versus Gradualism: The End of the Debate (Explaining the magnitude of the Transformational Recession). – Comparative Economic Studies, Vol. 42, No. 1, Spring 2000

⁶ Այստեղ նկատի ունենք իշխանությունների կողմից սահմանված «օրենքների» կանոնների վրա հիմնված կարգերը: Այն չափով է իրավակարգի, ներդրումային ռիսկի կողմնակալ ինքնաբերական ինքնաբերական:

⁷ Clague, Ch., Keefer, Ph., Knack, St., and M. Olson (1996). Property and Contract Rights in Autocracies and Democracies. Journal of Economic Growth, Vol. 1, (June), 243-276

⁸ Akhmedov, A., and E. Zhuravskaya (2004). Opportunistic Political Cycles: Test in a Young Democracy Setting. – Quarterly Journal of Economics, November 2004, 1301- 1338

⁹ Barro (1996). Democracy and Growth. Journal of Economic Growth, Vol. 1, 3-27.

¹⁰ Barro (1996). Democracy and Growth. Journal of Economic Growth, Vol. 1, 3-27.

¹¹ Liew, Leong. Marketization, Democracy and Economic Growth in China. – In: Beyond the Asian Crisis: Pathways To Sustainable Growth. Ed. By A. Chowdhury, I. Islam. Northampton, MA, Edward Elgar, 2001, pp. 300-23.

անհավասարությունը: Այդ ամենը բացասական է ազդում տնտեսական աճի տեմպերի, կյանքի տևողության, սոցիալական հավասարության, հանցագործությունների վրա:

Այլ կերպ ասած՝ դեմոկրատացումը առանց օրենքների և իրավակարգի ապահովման վատ է անդրադառնում տնտեսական աճի վրա: Դա այն գինն է, որը պետք է վճարել վաղ քաղաքական դեմոկրատացման համար: Եթե երկրները բաժանեն խմբերի ըստ իրավակարգի ապահովման աստիճանի և դեմոկրատացման մակարդակի, ապա ամենացածր տնտեսական աճն առկա է այն երկրներում, որոնք ունեն թույլ իրավակարգի և դեմոկրատացման համեմատաբար բարձր աստիճանի անհաջող համադրություն: Թույլ իրավակարգով ավտորիտար ռեժիմները տնտեսության համար ևս շատ լավ չեն, բայց ամեն դեպքում ավելի լավ են, քան դեմոկրատական ռեժիմները: հավանաբար նրանք կարող են լրացնել օրենքների պակասը կարգերի ավելցուկով, այսինքն՝ ինստիտուցիոնալ վակուումները լցնել ավտորիտար մեթոդներով:

Դժվար թե կարելի է պարզ համընկնում համարել այն փաստը, որ համառոտ բոլոր արագ զարգացող երկրները կամ հետաձգել են դեմոկրատացումը մինչև զարգացման բավական բարձր մակարդակին հասնելը, կամ փորձարկել են «կիսակուսակցական համակարգը» /մեծ իշխող կուսակցություն և մի քանի փոքր կուսակցություններ ընդդիմությունում, որոնք չունեն իշխանության գալու իրական հնարավորություններ/: Թայվանը, Հարավային Կորեան, Սինգապուրը, Չիլին, մինչև 1980-ական թվականների վերջը նաև Հինաստանը մինչև այսօր պատկանում են այն երկրների թվին, որոնք «հետաձգել են դեմոկրատացումը», իսկ Ճապոնիան, ինչպես նաև Գերմանիան և Իտալիան, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եղել են «կիսակուսակցական համակարգի» օրինակներ:

Այսպիսով, ներկայացված վերլուծությունից կատարված եզրահանգումները կարելի է ամփոփել այսպես. թույլ իրավակարգով ավտորիտար երկրներում արագ դեմոկրատացման իրականացումը «շոկային թերապիայի» ճանապարհով կարող է ուղեկցվել տնտեսական և սոցիալական մի շարք բացասական հետևանքներով: Դեմոկրատացումը, այսինքն ավտորիտարիզմից դեմոկրատիային անցումը, այնպես ինչպես շուկայական ռեֆորմները պետք է լինեն աստիճանական և ձեռքից ձեռք անցնեն իրավակարգի ամրապնդումով: Իհարկե, դեմոկրատացումը, քաղաքացիական հասարակության զարգացումը, հասարակության լայն զանգվածների մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին, սրանք բոլորը զարգացման կարևոր գործոններ են, բայց նրանք կարող են լինել հեշտ արատավորված, եթե դրանց իրականացումը բերում է ինստիտուտների թուլացման, տնտեսական աճի դանդաղեցման, սոցիալական անհավասարության և հանցագործության ավելացման: Հարցը խիստ արդիական է. ինչպիսին պետք է լինի դեմոկրատացման ռեֆորմների արագությունը և հաջորդականությունը, որպեսզի դրանց բացասական հետևանքները լինեն նվազագույնը:

Դեմոկրատիայի կողմնակիցները իհարկե պնդում են, որ դեմոկրատիան ոչ միայն նպատակ է, այլ նաև միջոց, որը նպաստում է հասնելու զարգացման այլ նպատակներին: Հարկավ, սա ճիշտ է, բայց մեկ պարտադիր պայմանի՝ սահմանված իրավակարգի, մնացած բոլոր իրավունքների և անձի ազատությունների ապահովման դեպքում: Հակառակ պարագայում, դեմոկրատացումը, ինչքան էլ դա անցանկալի լինի, ուղեկցվում է կոռուպցիայի ամրապնդմամբ, մակրոտնտեսական քաղաքականության որակի վատացմամբ, և որպես հետևանք, հանցագործության և սոցիալական անհավասարության աճով և այլ բացասական սոցիալ-տնտեսական հետևանքներով: Սրա վիճակագրական ապացույցները կան, և նույնիսկ առանձին օրինակները բոլորի աչքի առաջ են:

Ամփոփելով նշենք, որ ցածր իրավակարգով երկրներում ամբողջական լիբերալ դեմոկրատացման ամենակարճ ճանապարհը ընկած է ոչ թե «ցանկացած գնով» արագ դեմոկրատացման իրականացման, այլ իրավակարգի ամրապնդման հիմքում:

*Ներկայացվել է 14.11.2017թ.
Ընդունվել է տպագրության 26.12.2017թ.*